ԱՐԵՆ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐՆ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՈԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իրանի Իսլամական Հանրապետությունը Հարավային Կովկասի նորանկախ հանրապետությունների հետ իր միջպետական հարաբերությունները զարգացնելիս, բնականաբար, առաջնորդվում է կրոնական, էթնոմշակութային և այլ կարգի կողմնորոշիչներով: Այդ իսկ տեսակետից իր յուրահատկությամբ աչքի է ընկնում նաև ԻԻՀ հարաբերությունները Ադրբեջանի Հանրապետության հետ:

ԻԻՀ արտաքին քաղաքականության անդրկովկասյան ռազմավարության հիմնական խնդիրը եղել և մնում է տարածաշրջանային շրջափակումից դուրս գալու ձգտումը: Այդ առումով Թեհրանի կողմից Ադրբեջանին հատկացվում է որոշակի դեր՝ իր տնտեսական և քաղաքական մեկուսացումը հաղթահարելու գործում: Ընդ որում՝ կարևոր է նշել, որ ներկայումս Իրանի քաղաքական, մասամբ նաև մտավորական էլիտայի կողմից Ադրբեջանի Հանրապետությունն ընկալվում է որպես մի երկիր, որը իսլամական մի շարք երկրների՝ Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Պարսից ծոցի միապետությունների, Աֆղանստանի և Թուրքիայի հետ համատեղ կազմում է իսլամական պետությունների մի շղթա, որը որոշակիորեն նպաստում է Իրանի մեկուսացման հաղթահարմանը[1]:

Դեռևս 20-րդ դարի 90-ական թթ. Հարավային Կովկասի երկրների կողմից առաջ էր քաշվել, այսպես կոչված «անդրկովկասյան անվտանգության համակարգ» ստեղծելու մի նախագիծ, որը ոգևորությամբ ընդունվել էր նաև իրանական կառավարության կողմից: Թեհրանը հայտնել էր իր պատրաստակամությունը՝ անդամակցելու հավաքական անվտանգության այդ ծրագրին[2], որը սակայն իրականություն չդարձավ:

Իրանի Իսլամական Հանրապետության, այսպես կոչված «անդրկովկասյան» քաղաքականության առանցքը տարածաշրջանում «արտաքին ուժերի» ներկայության բացառումն է: Մասնավորապես՝ Թեհրանը մեծագույն դժգոհությամբ է վերաբերվում ԱՄՆ-ի, մասամբ նաև Եվրամիության երկրների քաղաքականության ակտիվացմանը Վրաստանում և Ադրբեջանում՝ դրա մեջ

---

[1] Шевелев В., Внешная политика современного Ирана: Геополитические интересы на Кавказе и юге России, 22.05.2004, http://kavkazonline.ru

[2] Касымов Р.А., Политика Ирана в закавказских государствах, 15.05.05, (http://limes.ru/rus/stat

անմիջականորեն տեսնելով սպառնալիք իր անվտանգությանն ու ներքին կայունությանը: Ի դեմս ԱՄՆ-ի քաղաքականության՝ Իրանը տեսնում է տարածաշրջանի կայությունը խաթարող գործոն:

Ներկայումս ԻԻՀ կողմից ԱՀ-ի նկատմամբ իրականացվող քաղաքական ռազմավարությունն աներկբայորեն վկայում է, որ չնայած մի շարք բարդությունների և խոչընդոտների՝ Թեհրանը եռանդուն ջանքեր է գործադրում իր ազդեցությունը, ավելին՝ քաղաքական ներկայությունն ԱՀ-ում ամրապնդելու ուղղությամբ[3]:

Հաշվի առնելով Անդրկովկասի աշխարհաքաղաքական նշանակությունը՝ Իրանը հատկապես ձգտում է թույլ չտալ արտատարածաշրջանային ուժերի ներթափանցումն Իրանի հյուսիսային սահմաններ՝ դրանով իսկ փորձելով խափանել երկրի շուրջը ստեղծված ամերիկյան ազդեցության շղթան: Դրա հետ մեկտեղ, Կասպից ծովի ավազանում ամերիկյան ռազմական ներկայության թուլացման նպատակով Թեհրանը առանձնակի եռանդով շարունակում է իր աշխարհաքաղաքական խաղն Ադրբեջանում, որը սերտորեն կապված է իր, այսպես կոչված «կասպիական» քաղաքականության շղթայի հետ: Հարկ է նշել, որ Ադրբեջանի հետ ԱՄՆ-ի իրականացրած տարբեր տեսակի ռազմատեխնիկական համագործակցության ծրագրերը, որոնք վերաբերում են ադրբեջանական ռազմական օբյեկտների արդիականացմանը և այլն, նպաստեցին այն բանին, որ Թեհրանը ձեռնարկի համապատասխան միջոցներ իր արտաքին քաղաքականության ռազմավարությունը Անդրկովկասում և Կասպյան շրջանում վերանայելու և վերաիմաստավորելու համար:

Արդյունքում ստացվեց այն, որ եթե օրինակ 1990թ. Իրանը Կասպից ծովի ավազանում չուներ և ոչ մի ռազմանավ, ապա ներկայումս ունի չորս ռազմածովային բազաներ: Թեհրանն արդեն հայտնել է, որ կդիմի ռազմական ուժի և իրեն կվերապահի առաջին հարվածի իրավունքը, եթե Ադրբեջանը համաձայնի Կասպից ծովի իր հատվածում ամերիկյան ռազմական բազաներ տեղադրել[4]: Թեհրանը սակայն չպետք է անտեսի այն հանգամանքը, որ այդ դեպքում կարող է հայտնվել մեկուսացման մեջ: Պարզ իրողություն է, որ ռազմական ընդհարումները կարող են հանգեցնել նրան, որ Կասպից ծովը վերածվի հերթական թեժ կետի, ինչն էլ կապահովի ԱՄՆ-ի մշտական ներկայությունն այս տարածքում: Իսկ սա բոլորովին չի համապատասխանում ծովափնյա երկրների շահերին: Ահա թե ինչու ԱՄՆ-ի քաղաքական

---

[3] Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան. Հարևանն՞ր, թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXII, Ե., 2003, էջ 35:

[4] "Сообщения о подготовке Ираном нападения на Азербайджан" 26.08.2005, http://dumaem.ru/index.php?

մտերմությունն Ադրբեջանի հետ, և առհասարակ Ադրբեջանի տեղն ու դերը ԻԻՀ-ի տարածաշրջանային քաղաքականության ոլորտում ունի հատուկ նշանակություն: Ավելին, իր արտաքին և ներքին քաղաքականության վարման ռազմավարությունը մշակելիս ԻԻՀ-ը չի կարող հաշվի չնստել ադրբեջանական գործոնի հետ: Ադրբեջանցիներին և իրանցիներին մոտեցնում է ոչ միայն սահմանամերձ լինելը, այլ նաև կրոնը, որն ազդել է երկու էթնոսների բարքերի և սովորույթների ձևավորման վրա: Լինելով գաղափարականացված պետություն՝ Թեհրանը թույլ չի տա իր կողքին աշխարհիկ պետության հզորացումը, որի բնակչությունը միատարր է Իրանի բնակչության զգալի մասի հետ:

Անկասկած, Ադրբեջանը մնում է իրանաշիիթական հեգեմոնիայի թվով առաջին և հիմնական թիրախը[5]: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Թեհրանը չի հրաժարվում իր կրոնական ազդեցության տարածումից, ապա անվարան կարող ենք ասել, որ վերը նշվածը ևս ունի իր ուրույն դերը Իրանի տարածաշրջանային ռազմավարության մեջ: Սակայն իրանական շիական գործոնի դիրքորոշման հետ զուգահեռ երկու երկրներում «շրջանառվում էր» նաև թյուրք-էթնիկական վարկածը, որը միջպետական լարվածության պատճառներից մեկն է:

Այնուամենայնիվ, այս կապակցությամբ ուշագրավ է արևելագետ Ն.Մ.Մամեդովայի հետևյալ կարծիքը, որ վերջին 25 տարիների ընթացքում իսլամական հեղափոխության զարգացման աճը թույլ է տալիս խոսել այն մասին, որ 90-ականների սկզբին ստեղծված իրադրությունը, որը վերաբերում էր տարածաշրջանի երկրների նկատմամբ իրանական արմատականության (ֆունդամենտալիզմի) տարածման վտանգին, չհաստատվեց[6]:

Պետք է ասել, որ Իրան-Ադրբեջան հարաբերություններում, չնայած նշմարվել են բազմաթիվ նախադրյալներ, որոնք կարող էին «լարվածության» առիթ հանդիսանալ հենց սկզբից, այնուամենայնիվ, շնորհիվ ԻԻՀ-ի զգույշ և հաշվարկված մոտեցման՝ Թեհրանը շարունակում է Ադրբեջանին դիտարկել որպես անդրկովկասյան տարածաշրջանի առանցքային երկրներից մեկը, որի հետ հարաբերությունների զարգացմանը հատուկ նշանակություն է տրվում[7]: Նրանց միջև ստրատեգիական հարաբերությունների զարգացման առումով գլխավոր խնդիրը տարածաշրջանային և միջազգային գործոնների ազդեցու-

---

[5] Сажин В., К вопросу об Ирано-азербайджанских отношениях, «Центральная Азия и Кавказ», № 4 (34), Швеция, 2004, с. 99:

[6] Мамедова Н.М, Экономические связи Ирана и стран СНГ, Сборник научных статей «Иран и СНГ», Москва, 2003, с 31:

[7] "Ирано-азербайджанские отношения: Диалог с переменным успехом", Российское информационное агенство, 18.11.2005 http://iran.ru/

թյունն է, որի վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Այս և մյուս հարցերի մասին հանգամանալից անդրադարձել է Թեհրանի համալսարանի դոկտոր-պրոֆեսոր Հաֆեզնիան, որը ԻԻՀ-ի և ԱՀ-ի առաջին համատեղ կլոր սեղանի* վերջին ճառախոսն էր: Նա հանդես է եկել «Ադրբեջանի քաղաքականության վերլուծություն, տարածաշրջանում Իրանի համար աշխարհաքաղաքական նոր խնդիրների առաջացում» զեկուցումով, որտեղ խմբավորել է ԱՀ-ի քաղաքական կուրսը երեք ուղղությամբ՝

• Իրանի մրցակից տարածաշրջանային և համաշխարհային ուժերի հետ քաղաքականության և անվտանգության հարցերով կապ ստեղծելու ձգտում,

• տեխնոլոգիաների առումով միջազգային համագործակցության և փոխօգնության շահագրգռվածություն,

• Իրանի հետ հարաբերություններում զգուշության պահպանում այդ երկրի աշխարհաքաղաքականությունից կախված լինելու պատճառով:

Դրանից հետո դոկտոր Հաֆեզնիան թվարկեց ադրբեջանական գործոնի հետևանքով Իրանի համար առաջացած հիմնական խնդիրները՝

• Իրանի հակառակորդների կողմից Ադրբեջանի շահարկումը՝ իրանական տարածք ճգնաժամ փոխանցելու համար,

• տարածաշրջանի աշխարհաքաղաքական հավասարակշռության խախտումը,

• Իրանի տարանցիկային հնարավորությունների չեզոքացման միջոցով տնտեսական խնդիրների ստեղծումը,

• կոնֆլիկտների զարգացումը Կասպից ծովի ավազանում:

Նա վերջում առաջարկեց անվտանգության համակարգի ուժեղացման և տարածաշրջանում օտարների ազդեցության կանխման համար մի քանի ճանապարհներ՝

• Օգնել Ադրբեջանին, որպեսզի աշխարհաքաղաքականության մեջ իրեն առանձնացված չզգա,

• աջակցել Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում,

---

* Իրանի Իսլամական Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև առաջին համատեղ կլոր սեղանը կազմակերպվել է Քաղաքական և Միջազգային Հետազոտությունների Ինստիտուտի կողմից, Բաքվում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության և նշված ինստիտուտի պատասխանատու անձանց հետ համատեղ: Այդ համատեղ կլոր սեղանը տեղի է ունեցել 1999թ. մայիսի 12-ին Քաղաքական և Միջազգային Հետազոտությունների Ինստիտուտում երկու կողմերի ներկայացուցիչների և համալսարանի պրոֆեսորներից մի քանիսի մասնակցությամբ: Տես «Аму-Дарья»,1999, № 2, с 117.

• տնտեսական և տեխնոլոգիական աշխատանքների կատարում[8]:

Դիտարկելով Իրանի կողմից իրականացվող քաղաքականությունը հարևան Ադրբեջանի նկատմամբ՝ հարկ ենք համարում նշել նաև մի քանի այլ կարևոր գործոններ, որոնցից ելնում է Ադրբեջանն իր հարավային հարևանի հետ հարաբերություններում: Նախ՝ Իրանի տարածքով է անցնում ամենակարճ ցամաքային ճանապարհը՝ Մերձավոր Արևելք և ելք դեպի Պարսից ծոց՝ հեռավոր Արևելքի շուկաներ: Բացի դրանից, վերջինիս տարածքով է անցնում նաև միակ գործող ճանապարհը Նախիջևան, որը վայելում է բազմակողմանի աջակցություն Իրանի կողմից: Այս առումով ուշագրավ է Իրանի առանձնահատուկ քաղաքականությունը Նախիջևանի Ինքնավար Հանրապետության նկատմամբ (վերջինիս օգնելով վառելիքով, իր ծախսերով այնտեղ գազամուղ, նավթամուղ, նավթավերամշակման գործարան կառուցելով): Ուժերը կենտրոնացնելով այս ուղղությամբ՝ Իրանը փորձում է պատնեշել Թուրքիայի ազդեցությունն ընդհանրապես Ադրբեջանում: Բացի այդ, Ադրբեջանում ապրում են իրանական ծագումով թաթեր ու թալիշներ, որոնք իբրև ազգային փոքրամասնություններ՝ զրկված են իրենց իրավունքներից: Իսկ եթե հաշվի առնենք, որ թալիշների մոտ կենտրոնախույս տրամադրությունները նկատելիորեն արտահայտված են, ապա պարզ է դառնում Ադրբեջանի իրանական քաղաքականության մեջ զգուշավորության դրսևորումները: Սակայն, այդ ամենի հետ մեկտեղ, Ադրբեջանը չի կարող իրեն թույլ տալ ակտիվորեն մերձենալ Իրանի հետ՝ զգուշանալով ԱՄՆ-ի ճնշումներից: Դա իրանական կողմը համարում է երկու երկրների փոխհարաբերությունների պատշաճ մակարդակի զարգացմանը խոչընդոտող գլխավոր արգելքը: Ուստի, անվտանգության համակարգի ուժեղացման և տարածաշրջանում օտարների ազդեցության կանխման կապակցությամբ դոկտոր Հաֆեզնիան իր վերը նշված ելույթում նաև առաջարկել է, որ Ադրբեջանին անհրաժեշտ է հետևյալը՝

• Պաշտպանել Իրանի շահերը տարածաշրջանում,

• չգործադրել զուր ջանքեր՝ համաշխարհային շուկաներ նավթի տեղափոխման կապակցությամբ Իրանի դերը չճանաչելու համար,

• Իրանի նկատմամբ ադրբեջանցիների մոտ ստեղծել դրական մթնոլորտ,

• համագործակցել Իրանի հետ՝ կարգավորելու Կասպից ծովի իրավական կարգավիճակը[9]:

---

[8] «Региональные и межрегиональные вопросы», «Аму-Дарья», Тегеран, 1999, № 2, с. 128-129:

[9] «Региональные и межрегиональные вопросы», «Аму-Дарья», Тегеран, 1999, № 2, с. 129:

Ադրբեջանը, եթե գործնականում հաճախ չի հետևում վերը նշված կետերին, ապա գոնե կիրառում է երկու երկրների խաղաղ համակեցության մեթոդը՝ օգտագործելով կոմպրոմիսների և երկկողմանի զիջումների քաղաքականությունը[10]:

Անդրկովկասյան անվտանգության համակարգի համագործակցության համար Ադրբեջանի պաշտոնական առաջարկն էր 3+3+2 բանաձևը, որը նախատեսում էր, որ Կովկասում անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է միայն Հարավային Կովկասի երեք հանրապետությունների համագործակցությունն իրենց երեք հարևանների (Իրան, Ռուսաստան և Թուրքիա) հետ՝ զուգահեռ համագործակցելով ԱՄՆ-ի և Եվրոպայի հետ: Այլ կերպ ասած, ԱՀ-ն ընդունում էր իրանական հայեցակարգը և համարում, որ կայունություն հնարավոր է երաշխավորել միայն այդ հայեցակարգին զուգահեռելով ԱՄՆ-ի և Եվրոպայի ներկայությունը՝ որպես Կովկասում անվտանգության պահպանման լրացուցիչ մարմիններ[11]:

Անկասկած, Ադրբեջանի քաղաքական կայունությունն ու տնտեսական զարգացումը որոշ չափով կախված է նաև Իրանից, քանզի այդ երկիրն ունի բավականին երկար սահման Իրանի հետ: Կայունության պահպանմամբ ապահովվում է նաև տարածաշրջանային թափանցիկ համագործակցության հնարավորությունը ոչ միայն Ադրբեջանի, այլ նաև Հարավային Կովկասի երեք հանրապետությունների և Իրանի հետ: Չնայած, որ Իրանի և Ադրբեջանի միջև գոյություն ունի համագործակցման որոշակի աստիճան, այնուամենայնիվ, Թեհրանում դեռևս պահպանվում է ոչ լիարժեք վստահելի գործընկերոջ վերաբերմունք իր հյուսիսային հարևանի նկատմամբ[12]: Թեև առկա է զանազան քաղաքական և տնտեսական կապերի փոխադարձ օբյեկտիվ հետաքրքրությունը, այսօր իրանա-ադրբեջանական հարաբերությունները, կարելի է ասել, ապրում են ոչ լավ ժամանակներ, մանավանդ իրանական ռեժիմի վրա ամերիկյան ճնշման ուժեղացման համատեքստում:

Այդ է վկայում նաև Ադրբեջանի Հանրապետության ազգային անվտանգության նախարար Նամիկ Աբբասովի արած հայտարարությունն այն մասին, որ Իրանը թայթայիչ գործողություններ է իրականացնում Բաքվի նկատմամբ[13]:

---

[10] Гамбар И., Лидер оппозиции в интервью AIA; Иран пытается влиять на ситуацию в Азербайджане. 04.11.2005.http://www.axisglobe.com/article.

[11] Сейид Расул Мосави, Принципы безопасности на Южном Кавказе, «Аму Дарья», Тегеран, 2004, № 15, с. 12-13:

[12] Svante E. Cornell, Small Nations and Great Powers, A stady of Ethnopolitical Conflict in the Caucasus, England 2001, p 322:

[13] ՀՀ ԱԳՆ, Մերձավոր և Միջին Արևելքի Վարչություն, Իրանի բաժին (բաց) տեղեկանք, #04-04, 05.04.1999, էջ 101:

Անկասկած, ԱՄՆ-ի վարչակարգի ներկայությունը տարածաշրջանում՝ այդ թվում նաև Ադրբեջանում, նրա վարած քաղաքականությունը հետապնդում է մեկ նպատակ, այն է՝ իրենցից կախում ունեցող ուժերի օգնությամբ խափանել Բաքվի և Թեհրանի միջև գոյություն ունեցող ցանկացած շփում:

Հարկ է ավելացնել, որ Ադրբեջանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարի՝ Իրանի դեմ արված արտահայտությունները կատարվում են այնպիսի պայմաններում, երբ այդ հանրապետության մյուս պաշտոնատարները, այդ թվում՝ նավթի նախարարի տեղակալ Ալի Հասանովն իր հերթին հայտարարել է, որ Իրանը կա և մնալու է Ադրբեջանի Հանրապետության տնտեսապես հզոր ամենամոտ հարևանն ու բարեկամը[14]: Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ թեև ինչքան էլ Ամերիկայի և սիոնիստական վարչակարգերի համար նորություն չեն նման արտահայտություններն ու միջազգային համագործակցության մեջ ադրբեջանահրանական հաճախ կրկնվող տեսակետները, այնուամենայնիվ, իրենց ծրագրերն իրականացնելու համար ամերիկացիները շարունակում են քայքայիչ գործողությունները և ջանքեր չեն խնայում՝ խափանելու Բաքվի և Թեհրանի միջև գոյություն ունեցող բարիդրացիական հարաբերությունները: Տեղին է նշել, որ իբրև այս քաղաքականության տրամաբանական հետևանք՝ ադրբեջանցի որոշ պաշտոնյաների մոտ հաճախ ծնվում են ստրատեգիական բնույթի այնպիսի մտքեր, ինչպիսին օրինակ հայտարարվել էր դեռևս 1995թ. Ադրբեջանի նախագահի քաղաքական խորհրդական Վաֆա Գուլիզադեի կողմից. «Ադրբեջանը գտնվում է հյուսիսային և հարավային երկու հզոր հարևանների միջև, ուստի իր քաղաքական և տնտեսական ինքնուրույնությունը պահպանելու համար ԱՄՆ-ի հովանավորության կարիքն ունի»[15]: Կամ մեկ այլ հայտարարություն արված Ադրբեջանի Հանրապետության արտգործնախարարի տեղակալ Արազ Ազիմովի կողմից. «Մենք Կովկասի խնդիրները լուծելու համար պետք է դրսևորենք հզոր քաղաքական կամք և փնտրենք արտաատլանտյան քաղաքական տարբերակ: Այս առումով Արևմտյան կառույցների հետ համագործակցելը կամ նրանց անդամակցելը Հարավային Կովկասի երկրների համար շատ կարևոր գործընթաց է, որին անդամակցող յուրաքանչյուր երկիր, ելնում է, բնականաբար, իր ազգային շահերից ու անվտանգության սկզբունքներից՝ իր հերթին ընդունելով նաև Եվրոպական կառույցների չափանիշները»[16].

Նկատի առնելով այն իրողությունը, որ ԱՄՆ-ը փորձում է պաշտպանել իր շահերը տարածաշրջանում, իսկ Ռուսաստանը ձգտում է հասնել իր ռազմա-

---

[14] Նույն տեղում, էջ 102:
[15] Լրագիր, 11 օգոստոսի, 1995:
[16] Калашников М., Зачем Западу Азербайджан?, http://compromat.ru/main/aliev/peredarozol.htm

վարական նպատակներին հարավում, ինչպես նաև Իսրայելի ակտիվացումն Անդրկովկասում, հատկապես նրա տնտեսական դիրքերի ամրապնդումն Ադրբեջանում՝ Իրանի համար էլ ավելի է կարևորվում Ադրբեջանի դերը[17]: Այդ իրադարձությունները, միանգամայն, ազդում են Իրանի տարածաշրջանային անվտանգությանը: Ամերիկայի և ՆԱՏՕ-ի պատվիրակությունների հաճախակի այցելությունները Ադրբեջան՝ դրա վառ ապացույցն են: Ակնհայտ է, որ վերջիններիս կողմից Ադրբեջանի աշխարհաքաղաքական և ռազմավարական նպաստավոր դիրքը, հարկ եղած դեպքում, կարող է օգտագործվել ընդդեմ Իրանի՝ վերջինիս վրա հարձակվելով ադրբեջանական տարածքից: Հետևաբար, այդօրինակ սպառնալիքները չեզոքացնելու նպատակով Թեհրանը կարևորում է Բաքվի հետ փոխհարաբերությունները: Պահելով այն պատշաճ մակարդակում՝ ԻԻՀ հաճախ է ձեռնամուխ լինում կանխել միմյանց միջև առաջացող լարված մթնոլորտի նկատելի եզրերը, որոնց հեղինակները սովորաբար լինում են ամերիկյան ազդեցությամբ տոգորված ադրբեջանական պաշտոնատար անձինք: ԻԻՀ-ի ակտիվությունն այս առումով, հավանաբար, պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինիս ձեռք չի տա՝ իր և Բաքվի միջև եղած խնդիրները ստանան միջազգային բնույթ և դառնան երրորդ երկրների համար քննարկման առարկա:

Առավել ևս, որ Արևմուտքի քաղաքականությունն իրանական կողմից դիտարկվում է որպես երկարաժամկետ ապակայունացնող բնույթի գործոն ողջ տարածաշրջանի համար[18]:

Սակայն անհերքելի է այն իրողությունը, որ անվտանգությունն ու կայունությունը Կովկասում և Կասպից ծովի ավազանում կախված է իրանա-ադրբեջանական հարաբերությունների վիճակից: Երկու երկրներն էլ հնարավորություն ունեն բարիդրացիական և բարեկամական հարաբերությունների օրինակ ցույց տալ աշխարհին, դառնալ անվտանգության և խաղաղության պատվար տարածաշրջանում: Այդ ճանապարհն ընկած է բոլոր բնագավառներում համագործակցության, երկխոսության և փոխըմբռնման միջև: Միայն տարածաշրջանային սերտ համագործակցությունը կարող է երաշխավորել անվտանգություն, կայունություն և խաղաղություն: Բայց ցավոք պետք է հավաստել, որ Ադրբեջանի և Իրանի փոխհարաբերությունները գտնվում են ուղղակի կախվածության մեջ այդ երկրների և երրորդ երկրների հետ ունեցած հարաբերություններից:

---

[17] Кац М., Геополитика Азербайджана, 22.08.2006, http://www.inosmi.ru/translation/229496.htm

[18] Касымов Р.А., Политика Ирана в закавказских государствах, 15.05.05. /http://iimes.ru/rus/stat